ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Բնութագրումով որոշել հատկանիշը:**

Բնական և հասարակական ցանկացած երևույթ կամ օբյեկտ Երկրի մակերևույթի վրա ունի իր որոշակի հասցեն: Դրա փոփոխությունը կարող է փոխել նաև երևույթի կամ օբյեկտի բնույթը: Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից որի՞ն է վերաբերում այս բնութագրումը.

1) կոնկրետությանը
2) համընդհանրությանը
3) համալիրությանը
4) տարածականությանը

2 **Հյուսիսային կիսագնդում կեսօրին առարկաների ստվերները դեպի հորիզոնի ո՞ր կողմն են ուղղված:**

1) արևմտյան
2) հյուսիսային
3) արևելյան
4) հարավային

3 **Ո՞րն է ամենափոքր մասշտաբը:**

1) 1:420000
2) 1:4200000
3) 1:4200
4) 1:42000

4 **Նկարում ի՞նչ քարտեզագրական պրոյեկցիա է պատկերված:**

1) գլանային
2) կոնային
3) հասարակածային
4) ազիմուտային

5 **Երկրի մակերևույթով անցնող և բևեռներն իրար միացնող երևակայական կիսաշրջագիծը կոչվում է.**

1) առանցք
2) զուգահեռական
3) ուղեծիր
4) միջօրեական

6 **Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող մարմինները հյուսիսային կիսագնդում իրենց սկզբնական ուղղությունից շեղվում են.**

1) վերև
2) ներքև
3) աջ
4) ձախ

7 **Գոնդվանայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**

1) Հարավամերիկյանը
2) Ռուսականը
3) Հյուսիսամերիկյանը
4) Սիբիրականը

8 **Ո՞ր օվկիանոսի ափերին են առավել ցայտուն դիտվում երկրաշարժերն ու հրաբխային ժայթքումները։**

1) Ատլանտյան
2) Հյուսիսային սառուցյալ
3) Խաղաղ
4) Հնդկական

9 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Ջերմային բարեխառն գոտիներն ընկած են արևադարձերի միջև։
2) Բևեռներում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են մեծ անկյան տակ։
3) Հասարակածում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են փոքր անկյան տակ։
4) Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է վայրի աշխարհագրական լայնությունից և բացարձակ բարձրությունից։

10 **Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.**

1) իզոբար
2) իզոհիպս
3) իզոբաթ
4) իզոթերմ

11 **Ո՞ր ծովերն ունեն Համաշխարհային օվկիանոսի միջին աղիությունից անհամեմատ փոքր աղիություն:**

1) Բալթիկ և Ազովի
2) Արաբական և Կորալյան
3) Կարայի և Բարենցի
4) Չուկոտյան և Բերինգի

12 **«Լիճ — աշխարհամաս» զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) Վերին — Ավստրալիա
2) Արալյան — Ասիա
3) Ուրմիա — Եվրոպա
4) Օնեգա — Աֆրիկա

13 **Շյուղախոտը և փետրախոտը ո՞ր զոնային են բնորոշ:**

1) սավաննային
2) տայգային
3) անապատին
4) տափաստանին

14 **Ի՞նչն է բնորոշ տայգային:**

1) անբավարար խոնավությունը
2) հողի բազմամյա սառածությունը
3) պոդզոլային հողերի գերակշռությունը
4) լայնատերև ծառերի առատությունը

15 **Եքիդնան և բադակտուցը ապրում են.**

1) Հյուսիսային Ամերիկայում
2) Եվրասիայում
3) Հարավային Ամերիկայում
4) Ավստրալիայում

16 **Ո՞ր օդային զանգվածներն են գերիշխում մերձարևադարձային կլիմայական գոտում:**

1) արևադարձային և բարեխառն
2) բարեխառն և արկտիկական
3) հասարակածային և արևադարձային
4) բարեխառն և անտարկտիկական

17 **Կղզի – պետություն է.**

1) Իսպանիան
2) Իրանը
3) Իսլանդիան
4) Իտալիան

18 **Էքսկլավ է.**

1) Մալթան
2) Մոնակոն
3) Լեսոտոն
4) Ալյասկան

19 **Բնակչության թվով գերխոշոր պետություն չէ.**

1) Ռուսաստանը
2) ՀԱՀ-ը
3) Հնդկաստանը
4) ԱՄՆ-ը

20 **Բնութագրումով որոշել գետը:**

Հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞ր գետն է.

1) Ենիսեյ
2) Օբ
3) Պեչորա
4) Լենա

21 **Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:
2) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:
3) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:
4) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:

22 **Ո՞ր ծովածոցը Բալթիկ ծովի մաս չէ:**

1) Ֆիննական
2) Բոտնիկական
3) Ռիգայի
4) Բիսկայան

23 **Օվկիանոսային ո՞ր հոսանքն է անցնում Աֆրիկայի հարավարևելյան ափերի մոտով:**

1) Կանարյան
2) Բենգելյան
3) Սոմալիական
4) Մոզամբիկի

24 **Ո՞ր շարքում է սննդային շղթան *սխալ:***

1) մուկ — կոբրա — արծիվ
2) ընձախոտ — քարայծ — հեպարդ
3) կարիճ — ճագարամուկ — կոբրա
4) ցեցե — այծքաղ — առյուծ

25 **Ո՞ր լիճն է գտնվում ամերիկյան Մեծ լճերի կազմում :**

1) Մեծ աղի
2) Օնտարիո
3) Մեծ արջի
4) Աթաբասկա

26 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Մեքսիկական ծոցը գտնվում է մայրցամաքի արևելքում:
2) Հյուսիսային ափերը շատ թույլ են կտրտված, և կղզիները քիչ են:
3) Մեծությամբ չորրորդն է՝ Հարավային Ամերիկայից հետո:
4) Ամենաբարձր և ամենացածր կետերը մայրցամաքի արևմուտքում են:

27 **Բնութագրումով որոշել նեղուցը:**

Այդ նեղուցը միացնում է 2 օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է:

1) Թորեսի
2) Մագելանի
3) Բերինգի
4) Դարդանելի

28 **Ավստրալիայում ոչ մշտահոս գետերը կամ չոր գետահունները կոչվում են.**

1) քրիկներ
2) ուեդներ
3) վադիներ
4) սելավներ

29 **Ո՞ր կենդանին Անտարկտիդայում և հարակից ջրային տարածքներում *չի* ապրում:**

1) ծովափիղը
2) կապույտ կետը
3) պինգվինը
4) սպիտակ արջը

30 **Ո՞ր երկրներում է բնակչության առավել համաչափ տեղաբաշխում նկատվում։**

1) Ռուսաստան և Կանադա
2) Բրազիլիա և Եգիպտոս
3) Ավստրալիա և Չինաստան
4) Մոլդովա և Գերմանիա

31 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Բնակչության վերարտադրության առաջին տիպին են պատկանում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրները։
2) Բնակչության թվի աճի տեմպերը բարձր են վերարտադրության երկրորդ տիպի երկրներում։
3) Բնակչության ցածր բնական աճը բնորոշ է զարգացած երկրներին։
4) Բնակչության մահացության ամենաբարձր ցուցանիշները բնորոշ են աֆրիկյան երկրներին։

32 **«Ժողովուրդ — ռասա» զույգերից ընտրել *սխալը։***

1) շվեդներ — եվրոպեոիդ
2) սենեգալցիներ — նեգրոիդ
3) պարսիկներ — եվրոպեոիդ
4) արաբներ — նեգրոիդ

33 **Տարբեր ջերմատվությամբ օժտված ռեսուրսների տեսակները միմյանց հետ համեմատելու նպատակով պայմանականորեն ընդունված համարժեքային միավորն անվանում են.**

1) պայմանական միավոր
2) պայմանական վառելիք
3) պայմանական նշան
4) պայմանական գիծ

34 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Ավտոմեքենաշինության տեղաբաշխման վրա մեծ է հումքային ու վառելիքաէներգետիկ ռեսուրսների ազդեցությունը։
2) Քիմիական արդյունաբերությունն ունի խիստ սահմանափակ հումքային բազա։
3) Գիտատար և նորագույն տեխնոլոգիաներով հագեցած արտադրությունները կենտրոնացած են զարգացող երկրներում։
4) Գյուղատնտեսական մեքենաշինության ձեռնարկությունները տեղաբաշխված են զարգացած հողագործության շրջաններում։

35 **Աշխատողների թվով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.**

1) մետաղաձուլությունը
2) սննդի արդյունաբերությունը
3) մեքենաշինությունը
4) թեթև արդյունաբերությունը

36 **Արևմտյան Եվրոպայի պետություններից չէ.**

1) Ֆինլանդիան
2) Շվեյցարիան
3) Ֆրանսիան
4) Գերմանիան

37 **Հարավային Եվրոպայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Հարուստ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով:
2) Արևադարձային կլիմայական գոտու սահմաններում է:
3) Ընդգրկում է Պիրենեյան, Ապենինյան և Փոքր Ասիա թերակղզիների երկրները:
4) Տարածաշրջանում հաճախակի են երկրաշարժերը, կան գործող հրաբուխներ:

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:**

1. Լեհաստան	ա. Բուխարեստ
2. Հունգարիա	բ. Պրահա
3. Ռումինիա	գ. Վարշավա
4. Չեխիա	դ. Բուդապեշտ

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
2) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

39 **Ո՞ր պետությունն է գտնվում երկու աշխարհամասում:**

1) Սիրիան
2) Իրանը
3) Թուրքիան
4) Իրաքը



քարտեզ 1

40 **Քարտեզ 1-ում ո՞ր թերակղզին է պատկերված Բ տառով:**

1) Ալյասկա
2) Ֆլորիդա
3) Կալիֆոռնիական
4) Լաբրադորյան

41 **Քարտեզ 1-ում ո՞ր ծոցն է պատկերված Է տառով:**

1) Ֆիննական
2) Գվինեական
3) Մեքսիկական
4) Կալիֆոռնիական

42 **«Լճեր — գոգավորության ծագում» զույգերից ընտրել *սխալը:***

1) Սևան, Վանա — տեկտոնահրաբխային
2) Ուրմիա, Ակնա — սողանքապատվարային
3) Փարվանա, Խանչալի — հրաբխային
4) Քարի, Սև — սառցադաշտային

43 **Ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Բարգուշատի և Վայքի լեռներն ունեն ծալքաբեկորային ծագում:
2) Գեղամա և Վարդենիսի լեռներն ունեն հրաբխային ծագում:
3) Արեգունու և Սևանի լեռները ՀՀ հարավային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:
4) Փամբակի և Բազումի լեռները ՀՀ հյուսիսային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:

44 **Ո՞ր մարզն է առավել խտաբնակ:**

1) Արարատի
2) Կոտայքի
3) Լոռու
4) Արմավիրի

45 **ՀՀ-ում տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցության վրա *չի* ազդել.**

1) բնակչության կրթական մակարդակը
2) արցախյան ազատամարտը
3) արտագնա աշխատանքի մեկնելու հանգամանքը
4) տղամարդկանց շրջանում բարձր մահացությունը

46 **ՀՀ ո՞ր քաղաքն է տուֆի արտահանման խոշոր կենտրոն:**

1) Սպիտակ
2) Բերդ
3) Ապարան
4) Արթիկ

47 **Ո՞ր քաղաքի մոտ կա պղնձամոլիբդենային հանքավայր.**

1) Ագարակ
2) Արտաշատ
3) Աբովյան
4) Աշտարակ

քարտեզ 2

48 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով:**

1) Շիրակ
2) Գեղարքունիք
3) Կոտայք
4) Արագածոտն

49 **Քարտեզ 2-ում ո՞ր հանքային աղբյուրն է նշված Գ տառով:**

1) Հանքավանի
2) Բջնիի
3) Դիլիջանի
4) Լիճքի

50 **Համախառն արտադրանքի ծավալով ԼՂՀ արդյունաբերության առաջատար ճյուղն էր.**

1) փայտամշակման արդյունաբերությունը
2) մեքենաշինությունը
3) հանքագործական արդյունաբերությունը
4) թեթև արդյունաբերությունը

51 **Ո՞ր մայրցամաքում է անապի գոտին:**

1) Հարավային Ամերիկա
2) Եվրասիա
3) Հյուսիսային Ամերիկա
4) Ավստրալիա

52 **Տրված բնական ռեսուրսներից որո՞վ են լեռնային տարածքները համեմատաբար աղքատ:**

1) ռեկրեացիոն
2) վառելիքային
3) ջրաէներգետիկ
4) մետաղային

53 **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) կոնյակի արտադրությունը
2) պղնձաձուլությունը
3) կարի արտադրությունը
4) սարքաշինությունը

54 **Ի՞նչ դեր ունի մթնոլորտում տարածվող օզոնի շերտը.**

1) խոնավ եղանակներին առաջացնում է լուսաքիմիական սմոգ
2) Երկրի վրա թթվածնի ստեղծման միակ աղբյուրն է
3) կլանում է Արեգակի ուլտրամանուշակագույն և տիեզերական ճառագայթները
4) ապահովում է ներքնոլորտում օդային զանգվածների շրջանառությունը

55 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) հարթավայրային գետերով տեղափոխվող անտառանյութը
2) քիմիական պարարատանյութերը
3) գետերի ջրերում լուծված հանքային աղերը
4) գեյզերների ջրերում լուծված հանքային աղերը

56 **Գրել նավարկելի ջրանցքների համարները:**

1) Պանամայի
2) Կուկի
3) Ֆլորիդայի
4) Բերինգի
5) Սուեզի
6) Թաթարական
7) Քիլի
8) Զոնդյան

57 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են:**

1) Դանիա
2) Լատվիա
3) Ֆինլանդիա
4) Շվեդիա
5) Եգիպտոս
6) Իսպանիա
7) Ճապոնիա
8) Մեծ Բրիտանիա

58 **Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով ուղղափառ են:**

1) ֆրանսիացիներ
2) շվեդներ
3) բելառուսներ
4) սերբեր
5) չեխեր
6) բրազիլացիներ
7) ավստրալացիներ
8) իսպանացիներ

59 **Գրել այն երկրների համարները, որոնք ուրբանիզացման առավել բարձր մակարդակ ունեն:**

1) Հնդկաստան
2) Չինաստան
3) Աֆղանստան
4) Արգենտինա
5) Բանգլադեշ
6) Բելգիա
7) Ճապոնիա
8) Մոզամբիկ

60 **Գրել Արաքսի ավազանին պատկանող վտակների համարները:**

1) Գետիկ
2) Զորագետ
3) Մակու
4) Ճորոխ
5) Խաչենագետ
6) Ողջի
7) Մեծամոր
8) Հրազդան

61 **Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք ջրային *չեն:***

1) Մեծամորի
2) Արզնիի
3) Վանաձորի
4) Քանաքեռի
5) Շամբի
6) Սևանի
7) Զորագետի
8) Տաթևի

62 **Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով:**

1) Բանգլադեշ
2) Չինաստան
3) Ինդոնեզիա
4) Հնդկաստան

63 **ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով:**

1) Կեչուտի 2) Սպանդարյանի 3) Ախուրյանի

64 **Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե. 40°-ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 70°-ի: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրով:**

(65-66) Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 13˚C է, գագաթին՝ 1˚C: Ստորոտը ծովի մակարդակից 1400 մ բարձրության վրա է (հաշվարկը կատարել 6˚-ով).

65	Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

66	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67	Որքա՞ն է երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե այդ երկրի բնակչության թիվը 2,5 մլն է, բնական աճի գործակիցը՝ 10 ‰:

68 **Երկրի գետային տրանսպորտի բեռնաշրջանառությունը 9 մլն տ·կմ է, իսկ բեռների փոխադրման միջին հեռավորությունը՝ 150 կմ։ Որքա՞ն է տարեկան փոխադրվող բեռների ծավալը։**

69 **Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Թեթև արդյունաբերության գլխավոր կենտրոնը Շանհայն է։
2) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի ու ցեմենտի արտադրությամբ։
3) Հարուստ է ածխի և երկաթաքարի պաշարներով։
4) Սև մետաղաձուլությունը զարգանում է բացառապես ներկրվող հումքի հիման վրա։
5) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում։
6) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը։

70 **ՀՀ Արագածոտնի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Անասնապահության ենթաճյուղերից առավել զարգացած են խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը։
2) Ռոգովի հողագործության համար հիմք են հանդիսացել Թալինի և Արզնի-Շամիրամի մայր ջրանցքները։
3) Աչքի է ընկնում գինու, կոնյակի, կաթի և կաթնամթերքի արտադրությամբ։
4) Հողաբարելավման կարևոր տեսակներից է ոռոգումը և քարամաքրումը։
5) Միջին և բարձր գոտիներում առավել զարգացած են խաղողագործությունն ու պտղաբուծությունը։
6) Տնտեսության զարգացման գործում մեծ դեր է խաղում արևմտյան մասով անցնող Երևան — Թբիլիսի երկաթուղին։